Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ԱՋԸ.

Ա.

Հովիւները Սեպուհի վերայ շրջելու ժամանակ մի քարանձաւի մէջ տեսան մի ծերունի՝ կրոթնած իւր գաւազանի վերայ, բաղուկները տարածած և կանգուն մնացած անշունչ։ Ո՞վ էր այդ ծերունին, չգիտէին նորա. «սակայն իմացան ի փառաց լուսոյն, թէ մեծ ծառայ Աստուծոյ է». քարի կարկառ կուտեցին նորա վերայ և թողին հեռացան։

Հայոց մեծ հովուի՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմինն էր, որ ծածկուեցաւ այդ նորանշան շիրմի տակ Սեպուհի միամիտ հովիւների ձեռքով։

Ինչո՞ւ այդպիսի անյայտութեան մէջ տեղի ունեցաւ ազգիս լուսաւորութեան նահապետի եր-